ԾՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության միջև մշակույթի բնագավառում 2023-2025 թվականների համագործակցության

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր),

հիմնվելով 2006 թվականի նոյեմբերի 6-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև մշակույթի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի վրա,

բարելավելով և ընդլայնելով փոխադարձ հարգանքի և իրավահավասարության սկզբունքների հիման վրա մշակույթի ոլորտում համագործակցությունը,

համաձայնեցին հետևյալի վերաբերյալ.

I

Կողմերը կձգտեն ստեղծել բարենպաստ պայմաններ՝ մշակույթի և արվեստի բնագավառում երկկողմ համագործակցության ընդլայնման համար:

II

Կողմերը կնպաստեն համերգային կազմակերպությունների և ստեղծագործական միությունների միջև երաժշտարվեստի և պարարվեստի ոլորտում համագործակցության հաստատմանը և զարգացմանը, ինչպես նաև կատարողների, երաժշտական ու խորեոգրաֆիկ կոլեկտիվների փոխանակմանը և Կողմերի պետությունների տարածքներում անցկացվող միջազգային մրցույթներին ու փառատոներին փոխադարձ մասնակցությանը:

III

Կողմերը կնպաստեն երկու պետությունների թատրոնների միջև ուղիղ կապերի հաստատմանը՝ կազմակերպչական աջակցություն ցուցաբերելով թատերական կոլեկտիվների հյուրախաղերի ու ելույթների անցկացմանը և թատերական փառատոներին փոխադարձության սկզբունքով մասնակցությանը:

IV

Կողմերը կնպաստեն Հայաստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության թանգարանների ու պատկերասրահների միջև

համագործակցության հաստատմանը՝ թանգարանային գործի բնագավառում փորձագետների, տեղեկատվական նյութերի, ինչպես նաև թանգարանային գործի ոլորտում գիտական համաժողովների ու սեմինարների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով:

Կողմերը կդիտարկեն թանգարանային ցուցահանդեսների, այդ թվում՝ ժամանակակից արվեստի ցուցահանդեսների կազմակերպման հնարավորությունը:

V

Կողմերը կնպաստեն երկու պետությունների գրադարանների միջև ուղիղ կապերի հաստատմանը, գրադարանային գործի ոլորտում կազմակերպվող համաժողովներին փորձագետների փոխադարձ մասնակցությանը, գրքերի ցուցահանդեսների կազմակերպմանը, ինչպես նաև մեթոդական նյութերի փոխանակմանը:

VI

Կողմերը կձգտեն բարենպաստ պայմաններ ստեղծել երկու պետությունների կինեմատոգրաֆիայի ոլորտի կազմակերպությունների միջև համագործակցության և փոխադարձ կինոցուցադրությունների կազմակերպման համար:

Կողմերը կնպաստեն Կողմերի պետությունների տարածքներում անցկացվող ամենամյա միջազգային կինոփառատոներին փոխադարձ մասնակցությանը:

VII

Կողմերը կհամագործակցեն մշակութային կրթության ոլորտում և կնպաստեն Կողմերի համապատասխան հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատմանը, կխրախուսեն ուսանողների մասնակցությունը Կողմերի պետությունների տարածքներում անցկացվող միջազգային մրցույթներին ու փառատոներին:

VIII

Կողմերը կնպաստեն պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանության և վերականգնման ոլորտում համագործակցության ընդլայնմանը:

IX

Կողմերը կհամագործակցեն ժողովրդական արհեստների ոլորտում և կաջակցեն այդ բնագավառում փորձագետների փոխանակմանը, ինչպես նաև միմյանց կտեղեկացնեն երկու պետություններում անցկացվող միջազգային ազգագրական փառատոնների մասին և կնպաստեն իրենց ներկայացուցիչների մասնակցությանն այդ միջոցառումներին:

X

Սույն Ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումների իրագործման պայմանները (ներառյալ ֆինանսական հարցերը) կսահմանվեն երկու պետությունների շահագրգիռ կազմակերպությունների միջև անմիջական երկկողմ խորհրդակցությունների միջոցով՝ հավասարության հիմքով:

XI

Սույն Ծրագրի դրույթներն իրականացվում են Կողմերի պետությունների ազգային օրենսդրության և ֆինանսական հնարավորություններին համապատասխան:

XII

Սույն Ծրագիրը Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի իմաստով միջազգային պայմանագիր չէ և չի ստեղծում միջազգային իրավունքով կարգավորվող իրավունքներ և պարտավորություններ Կողմերի և նրանց պետությունների համար:

XIII

Սույն Ծրագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կատարված է Երևան քաղաքում 2023 թվականի ապրիլի «28»-ին երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն, ղազախերեն և ռուսերեն:

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝	**Ղազախստանի Հանրապետության մշակույթի և սպորտի նախարարության կողմից՝**